«ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՏԵՂԱԲԱՇՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

ք. Երևան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ԱՌԱՐԿԱՆ 3

2. ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 3

3. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ 4

4. ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳ 5

5. ՖԻԴՈՒՑԻԱՐ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄ ԵՎ ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ 11

6. ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՆՈՆՆԵՐՈՒՄ 12

1. ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն Կանոնները սահմանում են «ՎՏԲ-Հայաստան Բանկ» Փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Տեղաբաշխող) կողմից արժեթղթերի տեղաբաշխման ծառայությունների մատուցման կարգն ու պայմանները:

1.2. Սույն կանոնները մշակված են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք), ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ և այլ իրավական ակտերի համապատասխան:

2. ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2.1. **«Հրապարակային տեղաբաշխում».** Արժեթղթերի տեղաբաշխում հրապարակային առաջարկի միջոցով:

2.2. **«Արժեթղթերի հրապարակային առաջարկ».** Որակավորված ներդրող չհանդիսացող 100-ից ավելի անձանց կամ անորոշ թվով անձանց ուղղված արժեթղթերի առաջարկ:

2.3. **«Թողարկման սինդիկատ».** Արժեթղթերի տեղաբաշխման նպատակով ներդրումային ծառայություններ մատուցող անձանց ժամանակավոր միավորում (տեղաբաշխողներ, բրոքերներ):

2.4. **«Տեղաբաշխող».** Անձ, որը տեղաբաշխման նպատակով թողարկողից արժեթղթեր է ձեռք բերում և (կամ) տեղաբաշխման նպատակով թողարկողի արժեթղթերն է առաջարկում, վաճառում կամ մասնակցում է նման գործ իրականացնելու համաձայնությանը կամ պայմանագրին այն բացառություններով, որոնք կարող են սահմանվել Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով:

2.5. **«Ազդագիր».** Թողարկողի և նրա արժեթղթերի վերաբերյալ, Օրենքով և դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերով սահմանված տեղեկություններ պարունակող փաստաթուղթ, որի հիման վրա իրականացվում է արժեթղթերի հրապարակային առաջարկը և (կամ) թույլտվությունը կարգավորվող շուկայում առևտրին.

2.6. **«Թողարկող».** Անձ, որն արժեթուղթ է թողարկում (թողարկել) կամ իր անունից արժեթուղթ թողարկելու առաջարկություն է անում.

2.7. **«Շահագրգիռ ներդրող».** Անձ, որին հասցեագրված է կոնկրետ արժեթղթի առաջարկը:

2.8. **«Շահագրգիռ ներդրողներին հասանելի փաստաթուղթ(երը)».** Փաստաթուղթ, որը կազմվում է Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով կամ 121-րդ հոդվածի 1-ին մասին 3-րդ և 4-րդ կետերով սահմանված դեպքերում և ներառում է ազդագրով (առևտրի ազդագրով) պահանջվող տեղեկատվությանը համարժեք տեղեկատվություն: Տվյալ փաստաթուղթը ներկայացվում է հրապարակային առաջարկ անելու նպատակով ՀՀ Կենտրոնական Բանկի նախնական համաձայնությունը ստանալու համար:

2.9. **«Ներդրող».** Անձ, որին պատկանում է արժեթուղթը, կամ որը նախատեսում է ձեռք բերել արժեթուղթ :

2.10. **«Հաճախորդ».** Անձ, որն օգտվում է ներդրումային ծառայություններ մատուցող անձի ծառայություններից, կամ որը դիմել է ներդրումային ծառայություններ մատուցող անձին այդ ծառայությունից օգտվելու նպատակով:

2.11. **«Աճուրդ».** Թողարկված արժեթղթերի տեղաբաշխման նպատակով կազմակերպվող մրցութային գործընթաց, որի ժամանակ արժեթուղթ ձեռք բերելու նպատակով հավանական ներդրողները ներկայացնում են գնման հայտեր, որոնք տեղաբաշխման համակարգում գրանցվում, դասակարգվում, համադրվում են և կարող են բավարարվել համապատասխան հանդիպակաց հայտի (հայտերի) առկայության դեպքում:

3. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

3.1. Տեղաբաշխումը դա արժեթղթերի առաջին վաճառքն է ներդրողին: Տեղաբաշխումը կարող է իրականացնել Թողարկողը կամ Օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված ներդրումային ծառայությունները մատուցելու իրավունք ունեցող անձը:

3.2. Արժեթղթերը տեղաբաշխման ձևերն են՝

- Հրապարակային,
- Ոչ հրապարակային:

3.3. Արժեթղթերի տեղաբաշխման եղանակներն են՝

- Երաշխավորված:
- Չերաշխավորված (լավագույն ջանքերի կիրառմամբ):

3.3.1. <u>Երաշխավորված տեղաբաշխում</u>

1) Երաշխավորված է համարվում այն տեղաբաշխումը, որի պարագայում Ընկերությունը պարտավորվում է վաճառել նախապես սահմանված արժեթղթերի ծավալը, որի դեպքում Տեղաբաշխողը ստանձնում է հետևյալ պարտականությունները՝

- իր անունից և իր հաշվին տեղաբաշխման ենթակա թողարկված արժեթղթերի ձեռք բերում,
- իր անունից և իր հաշվին տեղաբաշխվող արժեթղթերի գնման հայտերի տեղադրում:

2) Երաշխավորված տեղաբաշխումը կարող է իրականացվել հետևյալ կարգով՝

- արժեթղթերի թողարկման մասնակի ձեռք բերում, որը սահմանվում է կամ որպես բացարձակ արժեք արտահայտված դրամով, կամ որպես թողարկման ծավալի տոկոս,
- ամբողջ ծավալի ձեռք բերում (փակ բաժանորդագրություն),
- թողարկողի և տեղաբաշխողի պայմանագրով ամրագրված ժամկետներում՝ չտեղաբաշխված արժեթղթերի ձեռք բերում:

3.3.2. Չերաշխավորված տեղաբաշխում

1) Չերաշխավորված է (լավագույն ջանքերի կիրառմամբ) համարվում այն տեղաբաշխումը, որի պարագայում Տեղաբաշխողը պարտավորվում է կիրառել իր լավագույն ջանքերը՝ նախապես սահմանված արժեթղթերի ծավալը վաճառելու նպատակով:

2) Չերաշխավորված տեղաբաշխման դեպքում, Տեղաբաշխողը օգտագործելով արժեթղթերի շուկայում մասնագիտական գործունեություն իրականացնելու իր բոլոր հնարավարությունները և, ելնելով արժեթղթերի թողարկման մասին տեղեկատվության բացահայտման անհրաժեշտությունից, պետք է՝

- կիրառի լավագույն ջանքերը, որպեսզի տեղաբաշխի թողարկված արժեթղթերի ամբողջ ծավալը՝ լավագույն գնով և հնարավորինս կարճ ժամկետում,
- կանխարգելի հնարավոր շահերի բախման դեպքերը, որոնք կարող են բացասաբար ազդել արժեթղթերի թողարկման ընթացքի վրա և ապահովի վերջիններիս ժամանակին և ամբողջական կարգավորումը:

3.3.3. Տեղաբաշխման առարկա

Սույն կանոնի շրջանակում , տեղաբաշխման առարկա կարող են լինել միայն ֆիքսված եկամտաբերությամբ գործիքները (պարտատոմսերը):

4. ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳ

4.1. Տեղաբաշխողը, տեղաբաշխման ծառայությունների մատուցման դիմում ստանալուց հետո պետք է իրականացնի՝

ա) Հաճախորդի նախնական գնահատում: Այս փուլում՝

- Տեղաբաշխողը, համաձայն Օրենքով և այլ նորմատիվային ակտերով սահմանված կարգի և պահանջների՝ Հաճախորդին տրամադրում է պահանջվող պարտադիր տեղեկություններ և համապատասխանաբար հաճախորդից ստանում է պահանջվող փաստաթղթեր և տեղեկատվություններ,
- Վերլուծում և գնահատում է հաճախորդի ֆինանսատնտեսական վիճակը, թողարկման համար անհրաժեշտ իրավաբանական փաստաթղթերի առկայությունն ու ամբողջականությունը և այլ փաստաթղթեր՝ անհրաժեշտ հաճախորդի գնահատման համար:

բ) Տեղաբաշխման իրականացման պայմանագրի կնքում, տեղաբաշխման իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթերի կազմում: Այս փուլում՝

- Կնքվում է Տեղաբաշխման պայմանագիր թողարկողի հետ,
- Կախված տեղաբաշխման ձևից՝ մասնակցում է անհրաժեշտ փաստաթղթերի կազմման աշխատանքներին կամ ամբողջությամբ կազմում է փաթեթը:

գ) **Տեղաբաշխման իրականացում:** Այս փուլում՝

- Օրենքով, այլ նորմատիվային ակտերով և Տեղաբաշխման պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում իրականացնում է տեղաբաշխումը,
- Տեղաբաշխման արդյունքների վերաբերյալ տրամադրում է հաշվետվություններ՝ թողարկողին, ներդրողներին, ինչպես նաև Կենտրոնական Բանկ:

4.1.1. <u>Հաճախորդի նախնական գնահատում</u>

1) Արժեթղթերի տեղաբաշխումը իրականացնելու առաջարկ ստանալուց հետո, Տեղաբաշխողը պետք է իրականացնի հաճախորդի հնարավորությունների ամփոփ գնահատում և վերլուծում, այդ թվում նրա ֆինանսատնտեսական վիճակի վերլուծություն, թողարկման համար անհրաժեշտ իրավաբանական փաստաթղթերի ուսումնասիրում և այլն: Գնահատման և վերլուծության համար հաճախորդը պետք է ներկայացնի Տեղաբաշխողին համապատասխան տեղեկատվություն:

2) Հաճախորդի նախնական գնահատման ընթացքում, հաճախորդը Տեղաբաշխողին տրամադրում է «Գիտելիքների և փորձի մասին» տեղեկանք (Տես Հավելված #1), որը թույլ է տալիս Տեղաբաշխողին որոշել թե արդյո՞ք հաճախորդն ունի ներդրումային գործունեության բնագավառում անհրաժեշտ գիտելիքներ և փորձ, որպեսզի հասկանա տվյալ ներդրումային ծառայությունից կամ արժեթղթից բխող ռիսկերը: Տեղաբաշխողի գնահատականը տրամադրվում է Հաճախորդին (Տես Հավելված #1): Այն դեպքում, երբ հաճախորդը չի տրամադրում գիտելիքների և փորձի մասին տեղեկանքը կամ տրամադրում է ոչ բավարար տեղեկատվություն, ապա Տեղաբաշխողը զգուշացնում է հաճախորդին այն մասին, որ հաճախորդի նման վարքագիծը թույլ չի տալիս գնահատել Հաճախորդին:

3) Իր հերթին, Տեղաբաշխողը հաճախորդին տրամադրում է «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ պահանջները» կանոնակարգ 4/07-ով սահմանված հետևյալ տեղեկատվությունը՝

   ա) **Բանկի մասին ընդհանուր տեղեկություններ:** Հաճախորդին ներկայացվում է Բանկի անվանումը, կապի միջոցները, ներդրումային ծառայության մատուցման հիմքերը, լիցենզավորող իրավասու մարմնի անվանումը և կապի միջոցները:

   բ) **Բանկի և հաճախորդի միջև հաղորդակցման և տեղեկատվության փոխանակման միջոցների վերաբերյալ:** Հաճախորդին ներկայացվում է հաղորդակցման լեզուները, տեղեկատվության փոխանցման մեթոդները, պատվերների ընդունման և հաղորդման կարգը, տեղեկատվություն հաճախորդներին ներկայացվող հաշվետվությունների, դրանց ներկայացման հաճախականության և ժամկետների, ինչպես նաև ներկայացման կարգի մասին և այլն:

   գ) **Շահերի բախումները կանխարգելող միջոցառումների համառոտ նկարագիրը:** Հաճախորդի պահանջով կարող է տրամադրվել բանկի կողմից հաստատված ամբողջ կարգը :

   դ) **Արժեթղթերի տեղաբաշխման ծառայությունների դիմաց գանձվող վճարները,**

դրանց վճարման կարգը և եղանակները:

ե) **Արժեթղթերի մասին տեղեկատվություն,** այդ թվում պետք է տրամադրվի արժեթղթերի և դրանց հետ առնչվող ռիսկերի նկարագիրը: Այդ նկարագրով պարզ և հասկանալի ձևով ներկայացվում են յուրաքանչյուր տեսակի (բաժնետոմս, պարտատոմս և այլն) արժեթղթի առանձնահատկությունները, ինչպես նաև դրանց առնչվող ռիսկերը: Պրոֆեսիոնալ հաճախորդի դեպքում վերը նշված տեղեկատվության տրամադրումը պարտադիր չէ:

4.1.2. <u>Տեղաբաշխման իրականացման պայմանագրի կնքում, տեղաբաշխման իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթերի կազմում:</u>

1) Հաճախորդի վերլուծման և ամփոփ ստուգման ընթացքում, եթե պարզվում է, որ հաճախորդը ունի բավարար հնարավորություններ արժեթղթեր թողարկելու համար, ապա Բանկը պայմանավորվածություն է ձեռք բերում հաճախորդի հետ արժեթղթերի թողարկման կազմակերպան, դրանց տեղաբաշխման իրականացման կարգի ու պայմանների, վճարման կարգի, ժամկետների, արժեթղթերի տեղաբաշխման իրականացման ընթացքում կողմերի իրավունքներն ու պարտականությունները և այլնի վերաբերյալ: Մասնավորապես բանակցությունների արդյունքում թողարկողի և տեղաբաշխողի միջև կնքվում է Արժեթղթերի տեղաբաշխման գրավոր պայմանագիր, որը պետք է ներառի «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ պահանջները» կանոնակարգ 4/07-ով սահմանված հետևյալ դրույթները՝

- կողմերի իրավունքներն ու պարտականությունները,
- տեղաբաշխման ծառայությունների դիմաց վարձատրության չափի հաշվարկման և վճարման կարգը,
- հաճախորդի հաշվետվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը, ժամկետները և ձևը,
- հաճախորդի հետ կապի իրականացման կարգը, ինչպես նաև այն միջոցները, որոնք տվյալ հաճախորդի համար հանդիսանում են տեղեկատվության փոխանակման հուսալի միջոցներ,
- պայմանագրի պահանջների չպահպանման համար կողմերի պատասխանատվությունը,
- կողմերի միջև առաջացող վեճերի լուծման կարգը,
- պայմանագրի գործողության ժամկետը, փոփոխությունների և լրացումների կատարման, գործողության դադարեցման կարգը, այդ թվում՝ հաճախորդի կողմից պայմանագիրը միակողմանիորեն լուծելու իրավունքը՝ ներդրումային ծառայություններ մատուցող անձին առնվազն 10 օր առաջ տեղեկացնելու պայմանով,
- պայմանագրի դադարեցման դեպքում հաճախորդի միջոցների վերադարձման կարգը,
- օրենքով նախատեսված պարտադիր այլ տեղեկություններ: Պայմանագիրը կարող է պարունակել նաև օրենքներին, նորմատիվ իրավական ակտերին և ներդրումային ծառայություններ մատուցող անձի ներքին կանոններին ու կանոնակարգերին չհակասող այլ դրույթներ:

2) Արժեթղթերի տեղաբաշխման աջակցման նպատակով կարող է ստեղծվել թողարկման սինդիկատ (խումբ): Թողարկման սինդիկատի ստեղծման դեպքում պետք է առանձին պայմանագրով ամրագրվեն յուրաքանչյուր մասնակցի մասնակցության պայմանները և չափերը (տոկոսային համամասնությամբ և/կամ բացարձակ արժեքով) իրավունքները և պարտականությունները: Թողարկման սինդիկատի պետք է ունենա գլխավոր տեղաբաշխող, որը կկազմակերպի արժեթղթերի թողարկման հետ առնչվող համագործածցությունը՝ թողարկողի, պոտենցիալ ներդրողների, սինդիկատի անդամների, ՀՀ կենտրոնական բանկի, ՀԿԴ-ի, ֆոնդային բորսային և այլ մասնագիտացված անձանց միջև:

3) Նախքան Տեղաբաշխման իրականացումը, Բանկը կարող է մասնակցել արժեթղթերի թողարկման և տեղաբաշխման իրականացման համար՝ Օրենքով և Կենտրոնական Բանկի կողմից հաստատված նորմատիվային ակտերով, պահանջվող փաստաթղթերի կազմման աշխատանքներին կամ ամբողջությամբ կազմել դրանք, եթե վերջինս Տեղաբաշխման պայմանագրով Տեղաբաշխողի պարտավորությունն է: Մասնավորապես, այդ փաստթղթերն են՝

- Հրապարակային առաջարկի դեպքում՝ **Ազդագիրը**,
- Ազդագրի հրապարակման պահանջից բացառություն կազմող արժեթղթերի հրապարակային առաջարկի դեպքում՝ **Շահագրգիռ ներդրողներին հասանելի փաստաթուղթ(երը)** և այլ փաստաթղթեր՝ համաձայն Կետրոնական Բանկի կողմից սահմանված պահանջների:

4.1.3. <u>Տեղաբաշխման իրականացում</u>

1) Հրապարակայաին առաջարկի դեպքում, եթե ստորև ներկայացված գործառույթների իրականացումը Տեղաբաշխման պայմանագրով ստանձնված է Տեղաբաշխողին, ապա վերջինս՝

   - պետք է հրապարակի Ազդագիրը Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով և բովանդակությամ: Ազդագիրը հրապարակելուց անմիջապես հետո, սակայն ոչ ուշ, քան ազդագրի հրապարակմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը, տեղաբաշխողը պարտավոր է հրապարակել հայտարարություն հրապարակային առաջարկի վերաբերյալ՝ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով և բովանդակությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ սույն օրենքի համաձայն՝ ազդագրի հրապարակում չի պահանջվում:
   - պետք է պատշաճ ձևով առաքի բոլոր շահագրգիռ ներդրողներին «Շահագրգիռ ներդրողներին հասանելի փաստաթուղթը» կամ հրապարակի վերջինս իր պաշտոնական ինտերնետային կայքում և տպագիր եղանակով մատչելի դարձնի այն բոլոր շահագրգիռ ներդրողներին:

2) Ազդագրի գրանցումից հետո, թողարկված արժեթղթերը կարող են տեղաբաշխվել աճուրդով կամ բաժանորդագրության միջոցով:

3) Արժեթղթերի տեղաբաշխման նպատակով կազմակերպվող աճուրդը կարող է իրականացվել բաց կամ փակ եղանակով: Աճուրդով արժեթղթերի տեղաբաշխումը իրականացվում են համաձայն Հայաստանի ֆոնդային Բորսա ԲԲԸ-ի կողմից ընդունված «Արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպման կանոններ»-ի:

4) Բաժանորդագրությունը իրականացվում է Բաժանորդագրման հայտերի (Այսուհետ՝ Հայտ) միջոցով, որոնց ձևը նախապես մշակվում է Տեղաբաշխողի կողմից:

5) Բաժանորդագրման հայտում պետք է առնվազն ներառված լինեն հետևյալ տվյալները՝

ա) <u>Իրավաբանական անձանց համար</u>

- Հայտատուի անվանումը,
- Փոստային հասցե,
- Տեղեկություններ ընկերության պետական գրանցման վերաբերյալ,
- ՀՎՀՀ,
- Ընկերության պատասխանատու անձի անուն ազգանունը, կապի միջոցները, անձնագրի համարը,
- Հայտատուի բանկային հաշվի վավերապայմանները,
- Հայտատուի դեպո հաշվի համարը և վավերապայմանները,
- Տեղեկություններ ձեռք բերվող արժեթղթերի մասին (քանակ, ընդհանուր անվանական արժեք, այլ պայմաններ (առկայության դեպքում))

բ) <u>Ֆիզիկական անձանց համար</u>

- Հայտատուի անուն, ազգանունը,
- Ռեզիդենտությունը,
- Փոստային հասցե,
- Անձնագրի համարը, սերիան, տրման ամսաթիվը,
- Հայտատուի բանկաին հաշվի վավերապայմանները,
- Հայտատուին դեպո հաշվի համարը և վավերապայմանները,
- Տեղեկաություններ ձեռք բերվող արժեթղթերի մասին (քանակ, ընդհանուր անվանական արժեք, այլ պայմաններ (առկայության դեպքում)):

4.2. Բաժանորդագրության հայտի ներկայացման եղանակը ընտրվում է Ներդրողի կողմից: Մասնավորապես ներդրողը կարող է ընտրել հայտի ներկայացման հետևյալ եղանակները՝

1) **Թղթային (ներառյալ փաստաթղթերի փոխանցումը փոստով):** Թղթային ձևով հայտը ներկայացվում է 2 օրինակից, ընդ որում մեկ օրինակը մնում է Տեղաբաշխողի մոտ, մյուս օրինակը «Հայտն ընդունված է» նշագրմամբ և պատասխանատու աշխատակցի ստորագրությամբ և ընդունման ամսաթվի, ժամի գրանցմամբ վերարդարձվում է ներդրողին:

բ) **Էլեկտրոնային եղանակով հայտի փոխանցում:** Էլեկտրոնային եղանակով հայտը պետք է ուղարկվի Տեղաբաշխողի կողմից բաժանորդագրման համար

հատկացված հատուկ էլեկտրոնային հասցեով: Այլ հասցեով ուղարկված հայտը համարվում է չստացած: Հայտը ստանալուց հետո, Բանկի պատասխանատու աշխատակիցը ստորագրում է հայտը և ֆիքսում է ընդունման ժամը, որից հետո Ներդրողին ուղարկում է Հայտի ընդունման կամ մերժման մասին համապատասխան հաղորդագրություն: Հաղորդագրությունը ուղարկվում է Ներդրողի կողմից տրամադրված կամ ֆաքսիմիլային, կամ էլեկտրոնային հասցեով: Ներդրողը պետք է հնարավորինս սեղմ ժամկետներում Տեղաբաշխողին փոխանցի Էլեկտրոնային փոստով ուղարկված Հայտի բնօրինակը: Էլեկտրոնային փոստով ուղարկված հայտը ունի նույնքան իրավաբանական ուժ, որքան Հայտի բնօրինակը: էլեկտրոնային փոստով ուղարկված Հայտի և հետագայում փոխանցված բնօրինակի միջև տարբերության դեպքում հիմք է ընդունվում էլեկտրոնային փոստով ուղարկված տարբերակը:

գ) **Ֆաքսիմիլային եղանակով հայտի փոխանցում:** Ֆաքսիմիլային եղանակով Հայտ ներկայացնելու համար, Ներդրողը նախորոք հեռախոսով պետք է տեղեկացնի Բանկի պատասխանատու աշխատակցին՝ Հայտ ուղարկելու փաստի վերաբերյալ: Հայտը պետք է ուղարկվի Բանկի կողմից տրամադրված հատուկ հեռախոսահամարով: Այլ հեռախոհամարով ուղարկված Հայտը համարվում է չստացած: Հայտը ստանալուց հետո Բանկի պատասխանատու աշխատակիցը ստորագրում է Հայտը և ֆիքսում է ընդունման ժամը, որից հետո Ներդրողին ուղարկում է Պատվերի ընդունման կամ մերժման մասին համապատասխան հաղորդագրություն: Հաղորդագրությունը ուղարկվում է Ներդրողի կողմից տրամադրված կամ ֆաքսիմիլային, կամ էլեկտրոնային հասցեով: Ներդրողը պետք է հնարավորինս սեղմ ժամկետներում Բանկ փոխանցի ֆաքսիմիլային եղանակով ուղարկված Հայտի բնօրինակը: Ֆաքսիմիլային եղանակով ուղարկված Հայտը ունի նույնքան իրավաբանական ուժ, որքան Հայտի բնօրինակը: Ֆաքսիմիլային եղանակով ուղարկված Հայտի և հետագայում փոխանցված բնօրինակի միջև տարբերության դեպքում հիմք է ընդունվում ֆաքսիմիլային եղանակով ուղարկված տարբերակը:

4.3. Պատասխանատու աշխատակիցը իրավունք ունի մերժել Ներդրողի կողմից ներկայացված Հայտը, եթե.

- այն ներկայացվել է ներկայացված հայտի ձևից՝ շեղումներով կամ ջնջումներով,
- ներդրողը, սահմանված ժամկետում չի փոխանցել բաժանորդագրման հաշվին, Հայտով սահմանված դրամական միջոցները,
- այն ներկայացվել է ոչ համապատասխան բաժանորդագրման կարգով նշված պայմաններին:

4.4. Տեղաբաշխողը կարող է իր նախաձեռնությամբ կասեցնել տեղաբաշխման ընթացքը միայն Կենտրոնական բանկի համաձայնությամբ՝ առավելագույնը 10 աշխատանքային օրով: Եթե կասեցման ժամկետն ավարտվելու պահից՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, տեղաբաշխումը չի շարունակվում, ապա տեղաբաշխողը պարտավոր է դադարեցնել տեղաբաշխումը և վերադարձնել տեղաբաշխման ընթացքում ստացված միջոցներն արժեթղթերը ձեռք բերած անձանց սույն օրենքի 20-րդ հոդվածով սահմանված կարգով՝ կասեցման ժամկետի ավարտից 10 աշխատանքային օրվա ընթացքում: Տեղաբաշխողը պարտավոր է տեղաբաշխումը կասեցնելու և շարունակելու, տեղաբաշխումը դադարեցնելու և դրա ընթացքում ստացված միջոցները վերադարձնելու մասին տեղեկատվությունը հրապարակել առնվազն այն միջոցներով, որոնցով

հրապարակվել է հրապարակային առաջարկի մասին հայտարարությունը:

4.5. Բաժանորդագրման ժամկետը ավարտվելուց հետո, Տեղաբաշխողը ամփոփում է ներկայացված հայտերը, համաձայն Ազդագրում նկարագրված բաժանորդագրման հայտերի բավարարման/մերժման կարգի:

4.6. Արժեթղթերի տեղաբաշխման, դրանց վերջնահաշվարկը իրականացնելու և հետագայում դրանց շրջանառությունը երկրորդային շուկայում ապահովելու նպատակով, Տեղաբաշխողը մասնակցում է Հայաստանի Կենտրոնական դեպոզիտարիա և Ֆոնդային Բորսա ներկայացվող փաստաթղթերի կազմման աշխատանքներին և, համապատասխանաբար, կնքում է անհրաժեշտ պայմանագրեր՝ վերը նշվածը իրականացնելու նպատակով:

4.7. Տեղաբաշխման արդյունքները ամփոփելուց հետո Տեղաբաշխողը պետք է անհապաղ, սակայն ոչ ուշ, քան գործարքի կնքման հաջորդ աշխատանքային օրվա ավարտը տեղեկատվության փոխանցման հուսալի միջոցով, Թողարկողին և Ներդրողներին ներկայացնի հաշվետվություններ՝ տեղաբաշխման արդյունքների վերաբերյալ: Ներդրողներին և Թողարկողներին տրամադրվող հաշվետվությունները պետք է առնվազն պարունակեն «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ պահանջները» կանոնակարգ 4/07-ով սահմանված տեղեկությունները:

4.8. Տեղաբաշխողը պետք է օրենքով և այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով և ժամկետներում՝ ՀՀ Կենտրոնական Բանկ ներկայացնի համապատասխան հաշվետվություններ:

4.9. Տեղաբաշխողը կարող է նաև ձեռք բերել լրացուցիչ պայմանավորվածություն ինչպես թողարկողի, այնպես էլ ներդրողների հետ՝ տեղաբաշխված արժեթղթերի շրջանառության համար բարենպաստ պայմաններ ապահովելու համար: Այդ թվում Տեղաբաշխողը կարող է `

- վերլուծություններ իրականացնել և համապատասխանաբար արժեթղթերի շրջանառության վերաբերյալ հաշվետվություններ տրամադրել թե թողարկողին, թե ներդրողին,
- իրականացնել բրոքերային, դիլերային գործարքներ այդ արժեթղթերով,
- հանդես գալ որպես տվյալ արժեթղթերի Շուկա ստեղծող,
- և այլն:

5. ՖԻԴՈՒՑԻԱՐ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄ ԵՎ ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ

5.1. Տեղաբաշխողը, տեղաբաշխման իրականացման ժամանակ պետք է լինի անկողմնակալ, անհապաղ և ճշգրիտ: Մասնավորապես, այլ հավասար պայմաններ ունեցող հայտերի կատարումը Տեղաբաշխողը իրականացնում է դրանց ստացման հաջորդականությամբ՝ հենվելով բացառապես հաճախորդի կողմից տրված գնային, ծավալային, քանակական կամ առանձնահատուկ ցուցումների վրա, եթե շուկայում ստեղծված իրավիճակներն անհնարին չեն դարձնում դրանց հաջորդական կատարումը:

5.2. Արժեթղթերի տեղաբախումը իրականացնելիս Բանկի պատասխանատու

աշխատակիցը պետք է.

- համոզվի, որ գործարք կատարելու համար հայտը պատշաճ կերպով գրանցվել և ներկայացվել է կատարման,
- այլ հավասար պայմաններ ունեցող հայտերը կատարի, ըստ դրանց ստացման հաջորդականության, բացառությամբ, եթե հայտի բնութագրիչները կամ շուկայում ստեղծված իրավիճակը դա անհնարին են դարձնում, և ներդրողին անհապաղ տեղյակ պահի այն էական դժվարությունների կամ բացասական հանգամանքների մասին, որոնք անհնարին են դարձնում հաճախորդի հայտի ճշգրիտ կատարումը:

5.3. Տեղաբաշխման իրականացման և դրա հետ առնչվող այլ ծառայությունների մատուցման ժամանակ հաճախորդների և ներդրողների շահերը պետք է առաջնահերթ լինեն Տեղաբախողի շահերից:

5.4. Տեղաբաշխման իրականացման ժամանակ և դրա հետ առնչվող այլ ծառայությունների մատուցման ժամանակ, Տեղաբաշխողը չի կարող մանիպուլիացիայի ենթարկել արժեթղթերի առուվաճառքը արժեթղթերի շուկայում՝արժեթղթերի, թողարկողի վերաբերյալ մտածված թյուր տեղեկատվության տրամադրման միջոցով, ներառյալ գովազդում օգտագործվող տեղեկատվությունը :

5.5. Տեղաբաշխման իրականացման ժամանակ և դրա հետ առնչվող այլ ծառայությունների մատուցման ժամանակ Բանկի ծառայողները և այլ փոխկապակցված անձինք իրավունք չունեն օգտագործել ծառայողական տեղեկատվություն գործարքներ իրականացնելու նպատակով, ինչպես նաև տրամադրել այդ տեղեկատվությունը երրորդ անձանց գործարքներ իրականացնելու նպատակով :

6. ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՆՈՆՆԵՐՈՒՄ

6.1. Սույն Կանոններում փոփոխությունները և լրացումները կատարվում են Բանկի կողմից միակողմանիորեն:

6.2. Սույն Կանոններում Բանկի կողմից կատարված բոլոր փոփոխություններն ու լրացումները, որոնք կատարվել են Բանկի նախաձեռնությամբ և կապված չեն գործող օրենսդրության փոփոխությունների հետ, ուժի մեջ են մտնում և Հաճախորդի համար դառնում են պարտադիր Բանկի ինտերնետային կայքում տեղակայելուց 10 (տաս) օր հետո:

6.3. Բանկի կողմից սույն Կանոններում կատարված բոլոր փոփոխությունները, որոնք կապված են գործող օրենսդրության, առևտրի կազմակերպիչների կանոնների և կանոնակարգերի փոփոխությունների հետ, ուժի մեջ են մտնում վերջիններիս ուժի մեջ մտնելուց հետո:

Հավելված # 1

ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ **VTB(ARMENIA)** **БАНК ВТБ (АРМЕНИЯ)**

ՏԵՂԵԿԱՆՔ ՀԱՃԱԽՈՐԴԻ ՓՈՐՁԻ ԵՎ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հաճախորդի անվանումը (անուն, ազգանունը)

ՀԱՃԱԽՈՐԴԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Արժեթղթերը և նրանց առանձնահատկությունները

☐ Գերազանց ☐ Միջին

☐ Լավ ☐ Անբավարար

Արժեթղթերի հետ կապված ռիսկեր

☐ Գերազանց ☐ Միջին

☐ Լավ ☐ Անբավարար

ՀԱՃԱԽՈՐԴԻ ՓՈՐՁԸ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Գնահատեք ձեր փորձը արժեթղթերի բնագավառում

☐ Հարուստ ☐ Բավարար ☐ Կարճատև ☐ Փորձը բացակայում է

Գնահատեք ձեր փորձը ըստ արժեթղթերի տեսակների

	Հարուստ	Բավարար	Կարճատև	Բացակայում է
Բաժնետոմսեր և այլ բաժնային արժեթղթեր	☐	☐	☐	☐
Պետական, մունիցիպալ և կորպորատիվ պարտատոմսեր	☐	☐	☐	☐
Ածանցյալ գործիքներ	☐	☐	☐	☐
Ինվեստիցիոն հիմնադրամի արժեթղթեր	☐	☐	☐	☐
Արժույթային պայմանագրեր	☐	☐	☐	☐
«Ռեպո» գործարքներ	☐	☐	☐	☐
Մուրհակներ	☐	☐	☐	☐
Արժեթղթերով փոխառություն և վարկավորում	☐	☐	☐	☐
Այլ գործարքներ	☐	☐	☐	☐

_____ (անուն, ազգանունը)
Ստորագրություն

« » ..... 200 թ.

ԲԱՆԿԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

Ներկայացված տեղեկությունների լիարժեքության և նրանցով գնահատականներ տալու վերաբերյալ

☐ Ներկայացված տեղեկատվությունը բավարար է Հաճախորդին գնահատելու համար

☐ Ներկայացված տեղեկատվությունը բավարար չէ Հաճախորդին գնահատելու համար

Հաճախորդի գիտելիքների և փորձի վերաբերյալ՝ ներդրումային ծառայություններից և/կամ արժեթղթերից բխող ռիսկերը հասկանալու համար

☐ Գիտելիքները և փորձը բավարար են

☐ Գիտելիքները և փորձը բավարար չեն

_____ (*անուն, ազգանունը*)
Ստորագրություն

« » ..... 200 թ.